«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ

(Կազմված է «25»հուլիս 2024թ. և բաղկացած է 4 **(չորս) էջից)**

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 25.07.2024թ., ժամը 16:30

Համաձայն Արդարադատության նախարարություն մուտքագրված 13.06.2024 թ.-ին <Կուչինա > ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ Արմեն Մելքումյանի ներկայացված թիվ Մ/39512-2024 դիմումը Գևորգ Ավագյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության մասին կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի հուլիսի 25-ին հրավիրված է Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Կուչինա ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Ավագյանը

Սնանկության գործով դիմումատու՝ <Կուչինա > ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

՝ <Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Ավագյանը դիմում էր ներկայացրել կարգապահական նիստը իր բացակայությամբ քննելու համար :

Սնանկության գործով դիմումատու՝ <Կուչինա > ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանը չէր ներկայացել նիստին :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Սույն թվականի մայիսի 24-ին ՀՀ Արդարադատության նախարարություն մուտքագրված Կուչինա ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի թիվ Մ/39512-2024 դիմումը <Կուչինա >ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը և նշեց, որ սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում կարող են տեղ գտած լինել կարգապահական խախտումներ, որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

<Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ՝ Արդարադատության նախարարություն մուտքագրված <Կուչինա > ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի թիվ Մ/39512-2024 դիմումը սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կառավարչի գործողություններում խախտման դեպքերի վերհանման համար հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ. – Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1. Ուսումնասիրել բողոքաբեր՝ <Կուչինա > ՍՊԸ -ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի բողոքը :

2. Ուսումնասիրել <Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի կողմիվ ներկայացված դիմումը :

3.Ուսումնասիրել բողոքաբերի տրամադրած փաստաթղթերը;

4.Ուսումնասիրել կառավարիչ Գևորգ Ավագյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին աշխատանքային կարգին :

Դիմումում Արմեն Մելքումյանը նշել է ,որ Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպությունում տեղի է ունեցել <Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի կողմից Ընկերության սնանկության կառավարիչ լինելու

ընթացքում ցուցաբերած անգործության ,ինչպես նաև վերջինիս դրսևորած անթույլատրելի և էթիկայի նորմերը խախտող վարքագծի վերաբերյալ կարգապահական նիստ : Գևորգ Ավագյանը կարգապահական հանձնաժողովի ողջ նիստի ընթացքում շարունակաբար դրսևորել է անհարգալից վերաբերմունք ,ինչպես վստահորդիս և իմ մյուս փաստաբանի ու ընկերության մյուս ներկայացուցիչ Ինգա Սարաֆյանի նկատմամբ ,այնպես էլ կարգապահական հանձնաձողովի անդամների նկատմամբ : Բացի այդ սնանկության կառավարիչը դրսևորելով ոչ պատշաճ վարքագիծ նպատակաուղղված կերպով փորձել է դրդել ընկերության տնօրենին ,ինչպես նաև ընկերության ներկայացուցիչներին իրենց պատիվը և արժանապատվությունը պաշտպանելու նպատակով կատարելու այնպիսի գործողություններ ,որոնք իրենց բնույթով կարող են որակվել որպես հասարակության համար ընդունելի համարվող էթիկայի նորմերի խախտման և նույնիսկ << քրեական օրենսգրքով նախատեսված արարքներից որևէ մեկի կատարում :Միևնույն ժամանակ սնանկության գործով կառավարչի կողմից նման վարքագծի դրսևորումը չի համապատասխանում տվյալ մասնագիտություն ունեցող անձի կողմից հասարակությունում զբաղեցնող բարձր դիրքին ,նսեմացնում է կառավարչի դերն և նշանակությունը հասարակության շրջանում ստվերելով նույն մասնագիտություն ունեցող պատշաճ իրենց աշխատանքը կատարող անձանց բարձր որակական և մարդկային հատկանիշները :Սույն դիմումով < Կուչինա > ՍՊընկերության ներկայացուցիչը խնդրել է ձեռնարկել համապատասխան գործիքակազի գործադրման միջոցներ և կանխել սնանկության գործով կառավարիչ Գևորգ Անագյանի կողմից նմանօրինակ վարքագծի հետագա հնարավորությունը ,ինչպես նաև քայլեր ձեռնարկել նույն մասնագիտություն ունեցող անձանց բարի համբավը նսեմացնելու և սնանկության կառավարչի դերը հասարակությունում նվազեցնելուն ուղղված գործողությունների կատարման հետևանքները վերացնելու ու նմանօրինակ դեպքերի կրկնողությունը բացառելու նպատակով ընդուպ մինչև լիազորությունների դադարեցումը :

Հանձնաժողովի նախագաը ընթերցեց նաև սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված դիմումի պատասխանը ,որով ուշադրություն էր հրավիրվել վերհանելու կառավարչին քրեական գործով կայացրած քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմանը և հայտնել որ << Ազգային ժողովի << Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին 2013թ հոկտեմբերի 03-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը և Գևորգ Ավագյանի վերաբերյալ << քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել և հետապնդումը դադարեցվել է :Այլ հարցերին չի անդրադարձել :

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ – 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

<Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում կան խախտումներ, վերջինս խախտել է < Սնանկության մասին> ՀՀ օրենքի 27.2.հոդվածի 2) կետը կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները և նույն օրենքի 27.5.հոդվածի 2 կետի Կառավարչի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի շրջանակներում կիրառվում է կառավարչի նկատմամբ կարգապահական տույժերից մեկը այն է նկատողություն.

Հանձնաժողովի Նախագահը հարցը դրեց քվերակության
ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ – 3
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

<Կուչինա > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ **Գևորգ Ավագյանի** նկատմամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում <«Սնանկության մասին> ՀՀ օրենքի հոդված 27.5-ով սնանկության կառավարչի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ **նկատողություն :**

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան